Սայաթ Նովա

Թամամ աշխար պըտուտ էկա

Էս Էլ Դիբա ու յինգիդունիայի հանգում, որ մուսադասու պես կասեն. Արութինի ասած,

Թամամ աշխար պըտուտ Էկա, չը թողի Հաբաշ, նազա՛նի.
Չը տեսա քու դիդարի պես՛ դուն դիփունեն բաշ, նազա՛նի.
Թե՛ խամ հաքնիս, թե՛ զար հաքնիս, կու շինիս ղումաշ, նազա՛նի,
էնդու համա քու տեսնողը ասում է՝ վա՛շ-վա՛շ, նազա՛նի:

Դուն պատվական ջավահիր իս, Էլնեկ քու առնողին ըյի.
Օվ կու գըթնե՝ ա՛խ չի քաշի, վա՛յ քու կորցընողին ըլի.
Ափսո՛ս վուր շուտով մեռիլ է, լուսը քու ծընողին ըլի.
Ապրիլ էր, մեկ էլ էր բերի քիզի պես նաղաշ, նազա՛նի:

Դուն է՛ն գըլխեն ջուհարդար իս, վըրեդ զարնըշան է քաշ՚ած.
Դաստամազիդ թիլի մեչը մե շադա մարջան է քաշած.
Աճկիրըդ օսկե փիալա՝ չարխեմեն փընջան է քաշած.
Թերթերուկըդ նիտ ու նաշտար, սուր ղալամ թըրաշ, նազա՛նի:

Էրե՚սըդ՛ փարսեվար ասիմ, նըման է շամս ու ղամարին.
Բարակ մեճկիդ թիրման շալը նըման է օսկե քամարին.
Ղալամը ձեռին չէ կանգնում, մաթ շինեցիր նաղըշքարին.
Յիփ նըստում իս՛ թութի ղուշ իս, յիփ կանգնում իս՝ ռաշ, նազա՛նի:

Յիս է՛ն Սայաթ Նովասին չիմ, վուր ավզի վըրա հիմնանամ.
Աչաբ միզիդ ի՞նչ իս կամում՝ սըրտեդ մե խաբար իմանամ.
Դուն կըրակ, հաքածըդ կըրակ, վո՞ւր մե կըրակին դիմանամ.
Հընդու ղալամաքարու վըրեն ծածկիլ իս մարմաշ, նազա՛նի: